

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ հունվարի 31-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 42 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քսանհինգ, աշխատանքի տեղավորման՝ տասնչորս, բնակարան հատկացնելու, անասունի փոխհատուցման և ապօրինի շինության քանդման վերաբերյալ՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասնութին տրվել է դրական լուծում, յոթը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է բնակարան հատկացնելու, անասունների փոխհատուցման և ապօրինի շինության քանդման վերաբերյալ դիմումները: